Ըստ ՀՀ ԱԳՆ-ի՝ 2024 թ. նոյեմբերին Բաքվում կայանալիք COP 29 գագաթնաժողովից հետո Ադրբեջանը հնարավոր է նոր ագրեսիա ձեռնարկի Հայաստանի նկատմամբ:

Երեքշաբթի
25 հունիսի 2024թ.
№ 12 (621)

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ: ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru

ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

Ահեղընթաց մրցակցություն «Զանգեզուրի միջանցք» հորինվածքի շուրջ. իսկ ի՞նչ են մտածում Սյունիքում՝ երկրամասի համար ճակատագրական այդ հարցի շուրջ

5

Աշխատաժողով՝ նվիրված պղնձի արդյունահանման արդի վիճակին և մաքուր պղնձի ստացման հիմնախնդիրներին

Գիտություն-արտադրություն կապը սերտացնելու, կամ որ միևնույնն է՝ արտադրությունն արդիականացնելու խնդիրները հրատապ են եղել բոլոր ժամանակներում: Դա առավել ևս վերաբերում է լեռնահանքային արդյունաբերությանը, որի հետ բնապահպանական ռիսկեր են կապված: Այս համատեքստում առավել քան սպասված էր Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում անցկացված **«ՀՀ-ում պղնձի արդյունահանման արդի վիճակը և մաքուր պղնձի ստացման հիմնախնդիրները»** թեմայով երկօրյա աշխատաժողովը: Ձեռնարկության հյուրերն էին Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի (ՀԱՊՀ), Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ), ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի երկրաբանական գիտությունների ինստիտուտի, ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի ներկայացուցիչներ, ամբիոնների վարիչներ, ՀԱՊՀ դասախոսներ, լեռնային արդյունաբերության ոլորտի առաջատար մասնագետներ, գիտաշխատողներ:

Տանտիրոջ իրավունքով ներկաներին ողջունեց կոմբինատի գլխավոր տնօրեն Ռոման Խուդոլին. *«Մեծ պատիվ է գիտության ներկայացուցիչներին ընդունել մեր կոլեկտիվում: Պիտի ասեմ, որ յուրաքանչյուր արտադրություն սկսվում է գիտությամբ և ավարտվում նրանով: Մենք որոշակի ժամանակաշրջանում այդ մասին մոռացել էինք կամ դրան քիչ տեղ էինք հատկացրել: Եթե մեր առջև խնդիր ենք դրել ունենալ ամենաբարձր ցուցանիշներով ձեռնարկություն՝ թե՛ տեխնոլոգիական, թե՛ բնապահպանական, թե՛ կառավարման, թե՛ կորպորատիվ պատասխանատվության առումներով, ուրեմն այսօր ճիշտ վայրում և ոլորտին տիրապետող իսկական մարդկանց հետ ենք: Սրանք պարզապես խոսքեր չեն, այլ իրականում դա այդպես է»:*

Ռ. Խուդոլին բարեմաղթանքի խոսքում ի մասնավորի անդրադարձավ «Ընդերքի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությանը, ներդրումային վիճակի բարելավմանը:

«Հայաստանում լեռնամետալուրգիական արդյունաբերության զարգացման հնարավորությունների գնահատականը» զեկուցումով հանդես եկավ ՀԱՊՀ լեռնամետալուրգիայի և քիմիական տեխնոլոգիաների ինստիտուտի տնօրեն, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արմեն Հովհաննիսյանը:

Կոմբինատի գլխավոր տնօրենի առաջին տեղակալ, Հայաստանի հանքագործների և մետալուրգների միության նախագահ Վարդան Ջհանյանը հանդես եկավ կոմբինատի

գործունեության և տեխնիկատնտեսական ցուցանիշների վերաբերյալ հակիրճ տեղեկատվությամբ: Մասնավորապես, ձեռնարկությունը տարեկան վերամշակում է 22 միլիոն տոննա հանքաքար, 2023 թվականին պետությանն է վճարել 200 միլիոն դոլար հարկ, կոմբինատի

Շարունակությունը՝ էջ 2

Կեղծիք ու խաչագողություն՝ ամեն օր, ամեն տեղ, ամեն տեսակի....

Հովհաննես Թումանյան

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը Սյունիքում էր

Այցի շրջանակներում կառավարության ղեկավարը ծանոթացել է սուբվենցիոն և այլ ծրագրերով մարզում իրականացվող աշխատանքների ընթացքին:

Վարչապետի առաջին կանգառը եղել է Կապան քաղաքում: Նիկոլ Փաշինյանը ծանոթացել է Կապանի բժշկական կենտրոնի հարակից կամրջից մինչև Ողջի և Վաչագան գետերի խառնման հատվածում Վաչագան գետի հունի մաքրման, բետոնե հարթակների, գետի հենապատերի վերականգնման և վերանորոգման, մայթերի վերակառուցման աշխատանքներին: Շինարարական աշխատանքների ավարտը նախատեսված է ս.թ. հուլիսին 25-ին: Սուբվենցիոն ծրագրով մաքրվել և կահավորվել է 500 գծմ գետի հուն, պայմանագրի արժեքը 295.2 մլն դրամ է, որից 174 մլն դրամը տրամադրել է կառավարությունը:

Նույն համայնքում վարչապետը ծանոթացել է նաև Կապանի թիվ 9 մանկապարտեզի շենքի վերակառուցման և տարածքի բարեկարգման աշխատանքներին: Շինարարական աշխատանքներն ընթացքի մեջ են, ավարտը նախատեսվում է առաջիկա ամիսներին: Ծրագրի իրականացման արդյունքում համայնքը կունենա 170 սանի համար նախատեսված, կահավորված մանկապարտեզ: Պայմանագրի արժեքը 295 մլն դրամ է, որից պետական մասնաբաժինը 80 տոկոս է՝ 236 մլն դրամ:

Կառավարության ղեկավարը հաջորդիվ ծանոթացել է Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի Սյունիք գյուղից Կապան մուտք գործող հատվածի աշխատանքների ընթացքին: Ճանապարհի երկարությունը 4 կմ է, արժեքը 1,404 մլրդ դրամ, որը հատկացվել է պետական բյուջեից:

Այնուհետև Նիկոլ Փաշինյանին ներկայացվել են Կապան-Ճակատեն նոր ճանապարհի իրականացված աշխատանքները: Ճանապարհի երկարությունը 7,5 կմ է, արժեքը 1,454,5 մլրդ դրամ: Միջոցները հատկացվել են պետական բյուջեից:

Հաջորդիվ Նիկոլ Փաշինյանն այցելել է Կապան համայնքի Ճակատեն, Շիկահող, Սրաշեն, Ներքին Հանդ, Ծավ բնակավայրեր, հանդիպել տեղի բնակիչներին, ծանոթացել նրանց խնդիրներին: Մասնավորապես, դրանք վերաբերել են գյուղատնտեսական կոոպերատիվի ձևավորմանը, խմելու ջրագծի կառուցման, տանիքների վերանորոգման, բնակարանաշինության և այլ թեմաների: Վարչապետ Փաշինյանը նշել է, որ առկա խնդիրները գտնվում են կառավարության ուշադրության կենտրոնում և, ըստ կարևորության ու հերթականության, դրանց կտրվեն համապատասխան լուծումներ:

Ճանապարհաշինարարական ծրագրերի շրջանում կառավարության ղեկավարը ծանոթացել է Կապան-Ծավ-Մեղրի 17,2 կմ երկարությամբ հատվածում իրականացված նորոգման աշխատանքներին: Ծրագրի արժեքը

Շարունակությունը՝ էջ 3

Աշխատաժողով՝ նվիրված պղնձի արդյունահանման արդի վիճակին և մաքուր պղնձի ստացման հիմնախնդիրներին

Սկիզբը՝ էջ 1

արտադրանքը կազմել է հանրապետության համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) 2,2%-ը, ձեռնարկության աշխատողների թիվը 4660 է, միջին աշխատավարձը՝ 683.000 դրամ (ի դեպ, այս թվի մեջ ներառված չեն հավելավճարները): Հընթացս բանախոսը մանրամասնեց պետությանը վճարվող հարկերի դինամիկան:

Աշխատաժողովի մասնակիցները հարցեր ուղղեցին նրան, մասնավորապես. «Ի՞նչ եք մտածում պոչամբարը որպես տեխնածին հանքավայր ուսումնասիրելու և նրանում եղած պոտենցիալն օգտագործելու ուղղությամբ» հարցին Վարդան Ջհանյանը պատասխանեց, որ դա առայժմ տնտեսապես և ֆինանսապես անիրականանալի է: Եվ համաշխարհային պրակտիկայում նման դեպքեր չկան: Նոր պոչամբար կառուցելու հարցադրմանը հավելեց, որ առաջիկա հինգ տարվա կտրվածքով պոչամբարը բավարար է, իսկ երկարաժամկետ ծրագրերում նոր պոչամբարի կառուցումը ներառված է: Տնտեսագետներին, օրինակ, հետաքրքրում էր, թե ինչպես են կարողանում առաջընթաց ապահովել մետաղական բորսայում՝ պղնձի և մոլիբդենի խտանյութի գների տատանումների պայմաններում:

Աշխատաժողովի մասնակիցներն այցելեցին կոմբինատի բացահանք և ջարդիչ կայան:

Աշխատաժողովի երկրորդ օրը զեկուցումներ ներկայացվեցին «Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման հեռանկարները» (Վարդան Ալեքսանյան, ԵՊՀ տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ) և «Պղնձի արդյունահանման տիպերը, ՀՀ-ում պղնձի արդյունահանման արդի վիճակը» (Սուրեն Ներսեսյան, ԵՊՀ, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ) թեմաներով:

Զեկուցումներից հետո իր նկատառումները հայտնեց Ռոման Խուդոլիյը. *«Միջազգային շուկայում պղնձի պահանջարկն արտադրության ոլորտում այլ խնդիրներ են առաջ բերում: Ուստի հանքաքարից մետաղների կորզման տեխնոլոգիաներն առաջընթաց պիտի ապրեն: Եթե գիտական առումով մեզ աջակցություն չլինի, չենք կարող այս հանքավայրի արդյունավետ շահագործում ակնկալել»:*

Այնուհետև աշխատաժողովի մասնակիցներն ըստ մասնագիտությունների և հետաքրքրությունների շրջանակի խմբերի բաժանվեցին ու եղան կոմբինատի ղեկավար օղակների աշխատասենյակներում: Տնտեսագետները, օրինակ, հավաքվեցին գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Վարդան Ջհանյանի մոտ, ստացան իրենց հուզող հարցերի պատասխանը: Զրույցի ընթացքում, մասնավորապես, Վարդան Ջհանյանը ներկայացրեց ձեռնարկության արտադրանքի առաքումը սպառողին, որը Չինաստանն է, և այդ արտադրանքի առաքման առանձնահատկությունները:

Ինչ վերաբերում է երկու կողմի համագործակցությանը, դրա դրսևորումներից մեկն այն կլինի, որ կոմբինատը պատրաստակամություն հայտնի՝ Երևանի պետհամալսարանի «Լեռնային գործ» մասնագիտությամբ ուսանողների ուսումնաարտադրական պրակտիկան անցկացնել կոմբինատում, ընդ որում՝ բոլոր ծախսերը վերցնելով իր վրա:

Հյուրերը տպավորված հեռացան կոմբինատից:

– *Ավելի տպավորիչ էին կոմբինատի գլխավոր տնօրեն Ռոման Խուդոլիի արտահայտած տեսակետները կոմբինատի զարգացման համատեքստում: Պարոն Խուդոլին նախանշեց այն ուղղությունները, որ պիտի որդեգրի կոմբինատն առաջիկա տարիներին: Դրանցից մեկն առնչվում էր երկրաբանական-որոնողական աշխատանքներին: Շոշափվեց նաև հանքաքարի արդյունահանման ու վերամշակման նոր տեխնոլոգիաների ներդրման խնդիրը: Ամփոփելով այս ամբողջը՝ կարելի է փաստել, որ կառուցողական ու արդյունավետ էր աշխատաժողովը, քանզի և՛ կոմբինատի, և՛ գիտական համայնքի համար պարզ դարձան այն ուղղությունները, որով պիտի առաջնորդվեն հետագայում,*– «Սյունյաց երկրին» իր տպավորությունները ներկայացրեց Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի լեռնամետալուրգիայի և քիմիական տեխնոլոգիաների տեխնիկական համալսարանի ինստիտուտի «Լեռնային գործ և շրջակա միջավայրի պահպանություն» ամբիոնի վարիչ, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Արամ Բաղդասարյանը:

Աշխատաժողովի՝ Երևանից ժամանած հյուրերի այցն ավարտվեց կոմբինատի պոչամբար այցելություն կատարելով:

ՎԱՀԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Գլենդելի քաղաքապետը Կապանում էր

Յունիսի 19-20-ը Կապան համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանը հյուրընկալել է ԱՄՆ Կալիֆորնիա նահանգի Գլենդել քաղաքի քաղաքապետ Էլեն Ասատրյանին և Կալիֆորնիայի նահանգապետարանի պլանավորման և հետազոտությունների գրասենյակի ղեկավար Սամուել Ասեֆային:

Ողջունելով հյուրերի այցը Կապան՝ համայնքի ղեկավարը նախ շնորհավորել է Էլեն Ասատրյանին՝ քաղաքապետի պաշտոնը ստանձնելու կապակցությամբ, և նրան հաջողություններ մաղթել պատասխանատու աշխատանքում: Գևորգ Փարսյանը կարևորել է երկկողմ պատրաստակամությունը երկար տարիների պատմություն ունեցող համագործակցությունն ամուր հիմքերի վրա դնելու և զարգացնելու ուղղությամբ ներդրված անկեղծ ջանքերը: Հաշվի առնելով, որ Գլենդելը զարգացած քաղաք է, իսկ Կապանը՝ զարգացող, համայնքի ղեկավարը հատկապես ընդգծել է լավագույն փորձի փոխանակման, ինչպես նաև Գլենդելի հնարավորություններն օգտագործելու կարևորությունը:

Էլեն Ասատրյանն իր հերթին շնորհակալություն է հայտնել ջերմ ընդունելության համար և Գևորգ Փարսյանին մանրամասն ներկայացրել Գլենդելում կայացած վերջին հանդիպումից հետո միջհամայնքային համագործակցության վերակազմակերպմանն ուղղված աշխատանքների ընթացքը, ապա խոսել առաջիկա ծրագրերի և անելիքների վերաբերյալ: Է. Ասատրյանը հայտնել է, որ սեպտեմբեր ամսին մտադիր է այցելել քաղաքապետարանի աշխատակազմի և անհրաժեշտ մասնագետներից կազմված պատվիրակության հետ միասին ու արդեն իսկ տեղում կարիքները հասկանալով՝ համատեղ արդյունավետ աշխատանք իրականացնել:

Հանդիպման ավարտից հետո, Գևորգ Փարսյանի ուղեկցությամբ, հյուրերը շրջել են քաղաքում, եղել զբոսայգիներում և պատմամշակութային վայրերում՝ ընդհանուր պատկերացում կազմելու քաղաքային ենթակառուցվածքների զարգացման շուրջ հնարավոր համագործակցության ուղղությունների վերաբերյալ:

//

Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպանը Գորիսում էր

Գորիս համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանն ընդունել է Ֆրանսիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Օլիվյե Դեկոտինյին: Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցեր, ինչպես նաև Գորիսի զարգացման ուղղությամբ համագործակցության հեռանկարները: Դեսպանը կարևորել է Ֆրանսիայի հետ գործակցության խորացումը և հույս հայտնել համատեղ նոր նախագծերի իրականացման համար: Համայնքի ղեկավարը և դեսպանը միասին շրջել են Վիեների պուրակում, որտեղ իրականացվում են ենթակառուցվածքների արդիականացման և բարեկարգման աշխատանքներ: Նախատեսվում է թարմացնել զբոսայգու ճեմուղիները, կանաչապատ գոտիները, նստարանները, լուսավորության համակարգը: Վերակառուցումից հետո պուրակը կդառնա քաղաքացիների սիրելի հանգստավայրը՝ նոր հնարավորություններ ընձեռելով հաճելի ժամանակ անցկացնելու համար:

Հունիսի 21-ի երեկոյան տեղի է ունեցել համերգ՝ Ֆրանսիայի դեսպանատան նախաձեռնությամբ:

//

Քաջարանի պատվիրակությունը Չինաստանի Հարբին քաղաքում էր

Մայիսի 17-21-ը չինական կողմի հրավերով տեղի է ունեցել ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ղեկավար Մանվել Փարամազյանի գլխավորած պատվիրակության այցը ՉԺՀ Հեյլունձիան նահանգի կենտրոն Հարբին քաղաք:

Այցի ընթացքում պատվիրակությանն ընդունել է Հարբին քաղաքի ժողովրդական կառավարության քաղաքապետ Վան Խեշենը: Իր խոսքում վերջինս ցանկություն է հայտնել խորացնել Քաջարան քաղաքի հետ նոր ձևավորվող հարաբերությունները՝ առաջարկելով ստեղծել մշտական կապ, նպաստել տարբեր ոլորտներում համագործակցությանը, կազմակերպել պարբերական այցեր:

Հանդիպման ավարտին ստորագրվել է **«ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան և Հարբին քաղաքի համայնքապետարանների և ՉԺՀ Հեյլունձիան նահանգի Հարբին քաղաքի ժողովրդական կառավարության միջև փոխըմբռնման և համագործակցության մասին»** հուշագիրը:

Այցի շրջանակներում պատվիրակությունը ծանոթացել է 10 միլիոն բնակչություն ունեցող Հարբինի քաղաքային տնտեսությանը, մշակույթին և զարգացման ոլորտներին, այցելել Հարբինի 33-րդ միջազգային առևտրատնտեսական տոնավաճառ, Տնտեսական և տեխնոլոգիական զարգացման ու առանցքային ձեռնարկությունների հարբինյան գոտի և այլ վայրեր:

//

Վարչապետ Փաշինյանը նշել է, որ Սյունիքում իրականացվող լայնածավալ ճանապարհաշինական աշխատանքները հնարավորություն են տալիս այսօր արդեն խոսել նոր ճանապարհային ցանցի ստեղծման և դրանից ակնկալվող արդյունքի մասին:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը Սյունիքում էր

Սկիզբը՝ էջ 1

1,046 մլրդ դրամ է, միջոցները հատկացվել են պետական բյուջեից:

Հաջորդիվ Նիկոլ Փաշինյանին է ներկայացվել Հյուսիս-հարավ ավտոմայրուղու Ագարակ-Քաջարան 32 կմ հատվածի շինարարական աշխատանքների ընթացքը: Դրանք մեկնարկել են 2024թ. մայիսին, ավարտը նախատեսված է 2026թ. վերջին: Ծրագրի արժեքը 214.4 մլն. դոլար է, իսկ շինաշխատանքներն իրականացնում են իրանական երկու ընկերություններ: Վարչապետ Փաշինյանն ընդգծել է վերոնշյալ ծրագրի ռազմավարական բնույթը տարածաշրջանի համար և կարևորել շինաշխատանքների որակյալ ու ժամանակին իրականացումը:

Քաջարանում կառավարություն-համայնք սուբվենցիոն ծրագրի շրջանակում 240 մլն դրամ ընդհանուր արժեքով վերակառուցվել են պուրակներ, մարզահրապարակ և խաղահրապարակ: Կառավարության մասնաբաժինը 50 տոկոս է՝ 120 մլն դրամ: Քաջարանի Տերյան փողոցի մարզահրապարակի արժեքը 45.3 մլն դրամ է: Վարչապետը ծանոթացել է իրականացված աշխատանքներին, զրուցել բնակիչների հետ, ովքեր շնորհակալություն են հայտնել կատարված բարեկարգման աշխատանքների ու ստեղծված պայմանների համար:

Նիկոլ Փաշինյանն այցելել է Կապանի ֆուտբոլային մարզադաշտ, որը կվերակառուցվի և կբերվի պատշաճ տեսքի՝ համապատասխանեցնելով միջազգային մրցումային չափանիշներին: Վերջերս կառավարությունը Կապան քաղաքի ֆուտբոլային մարզադաշտի նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչելու մասին որոշում էր ընդունել: Վարչապետն ընդգծել է ընդունված որոշման կարևորությունը, ինչը կնպաստի Կապանում ֆուտբոլի զարգացմանն ու մասսայականացմանը:

Կառավարության ղեկավարին ներկայացվել են նաև Մ-2 Կապան-Տաթև միջպետական նշանակության ավտոճանապարհի՝ Վերին Խոտանանը շրջանցող ճանապարհահատվածի կառուցման աշխատանքները: Ճանապարհի երկարությունը 11,04 կմ է, ծրագրի արժեքը՝ 3,018 մլրդ դրամ: Միջոցները հատկացվել են պետական բյուջեից:

Վարչապետի վերջին կանգառը եղել է Շուռնուխ բնակավայրում: Այնտեղ Նիկոլ Փաշինյանը ներկա է գտնվել նորակառույց առանձնատների բաշխման՝ վիճակահանության արարողությանը: Կառավարության ծրագրի իրականացման արդյունքում կառուցվել է 13 առանձնատուն. թվով 13 ընտանիք, այդ թվում՝ 12 բնակելի տուն կորցրած ընտանիք կստանան բնակելի տուն և անասնագոմ: Ծրագրի արժեքը 1.21 մլրդ դրամ է: Վարչապետ Փաշինյանը շրջել է առանձնատներով՝ ծանոթացել ստեղծված պայմաններին և շնորհավորել բնակիչներին բնակարանամուտի առիթով:

«Ուզում եմ հավատալ, որ այս թաղամասը Շուռնուխի, Գորիսի, Սյունիքի և Հայաստանի Հանրապետության նոր կյանքի խորհրդանիշն է, որտեղ կան ապրելու և աշխատելու համար բոլոր պայմանները: Յանկանում եմ բոլորիդ առողջություն, որ աշխատելու ուժ ունենաք և այդ ընթացքում տեսնեք դրա արդյունքը, հարստանաք և մեր երկիրը հարստացնեք»,– ասել է վարչապետը: Նիկոլ Փաշինյանն անդրադարձել է Սյունիքի մարզի տարբեր բնակավայրեր կատարած այցերին և բնակիչների հետ հանդիպումներին, ընդգծել, որ դրանք մեծ էներգիա են հաղորդել: Նիկոլ Փաշինյանը շեշտել է, որ բոլոր բնակավայրերում զգացել է աջակցություն խաղաղության և սահմանազատման օրակարգերին: Վարչապետն ընդգծել է, որ անցնում ենք բարդ պրոցեսով, սակայն այսօր մեր երկիրը կանգուն է, անկախ է, ինքնիշխան է և ամեն օր իր ինքնիշխանության ու անկախության մակարդակը բարձրացնում է, և դա առաջին հերթին հանրության ըմբռնման և աջակցության շնորհիվ: *«Մենք պետք է քայլ-քայլ, հետևողական իրական Հայաստանը կառուցենք: Սա է իրական Հայաստանը, որտեղ ապրում են իրական մարդիկ, որտեղ ապրելն ամոթ չէ, որտեղ մարդիկ պետք է սիրեն կյանքը, որտեղ կյանքը սիրելը պետք է հնարավոր լինի, ապրելը, աշխատելը, հարստանալը, բարեկեցիկ ապրելը պետք է հնարավոր լինի»,*– նշել է վարչապետը:

17.06.2024

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը Սյունիքի մարզ աշխատանքային այցի երկրորդ օրը շարունակել է ծանոթանալ սուբվենցիոն և կապիտալ ծրագրերով տարբեր բնակավայրերում իրականացված և ընթացիկ աշխատանքներին:

Կառավարության ղեկավարին նախ ներկայացվել են Տաթև–Աղվանի միջպետական նշանակության ավտոճանապարհի 19,5 հատվածի հիմնանորոգման աշխատանքները: Ծրագրի արժեքը 3,375 մլրդ դրամ է: Միջոցները տրամադրվել են պետական բյուջեից:

Վարչապետ Փաշինյանը նշել է, որ Սյունիքում իրականացվող լայնածավալ ճանապարհաշինական աշխատանքները հնարավորություն են տալիս այսօր արդեն խոսել նոր ճանապարհային ցանցի ստեղծման և դրանից ակնկալվող արդյունքի մասին:

Վարչապետի վերջին կանգառը եղել է Շուռնուխ բնակավայրում: Այնտեղ Նիկոլ Փաշինյանը ներկա է գտնվել նորակառույց առանձնատների բաշխման՝ վիճակահանության արարողությանը: Կառավարության ծրագրի իրականացման արդյունքում կառուցվել է 13 առանձնատուն. թվով 13 ընտանիք, այդ թվում՝ 12 բնակելի տուն կորցրած ընտանիք կստանան բնակելի տուն և անասնագոմ:

Հաջորդիվ վարչապետը չնախատեսված կանգառ է ունեցել Շինուհայրում, որտեղ բնակիչների հետ հանդիպմանն անդրադարձել է Ադրբեջանի հետ սահմանազատման գործընթացին և ընդգծել անվտանգության երաշխավորման գործում լեգիտիմության կարևորությունը:

Նիկոլ Փաշինյանը Գորիսում այցելել է մեծանուն գրող Ակսել Բակունցի տուն-թանգարան, ծանոթացել այնտեղ առկա ցուցանմուշներին և տուն-թանգարանի գործունեությանը:

Ճանապարհաշինարարական ծրագրերի շրջանակում վարչապետին ներկայացվել են նաև Գորիս–ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի 4 կմ հատվածի հիմնանորոգման աշխատանքները: Ծրագրի արժեքը 778 մլն դրամ է, որը տրամադրել է կառավարությունը:

Վարչապետի հաջորդ կանգառը եղել է Խնձորեսկում, որտեղ բնակիչների հետ հանդիպմանը ևս Նիկոլ Փաշինյանն անդրադարձել է սահմանազատման գործընթացին և պատասխանել դրա, ինչպես նաև կրթության, գյուղատնտեսության հետ կապված տարբեր հարցերի:

Նիկոլ Փաշինյանը եղել է նաև Խնձորեսկում տեղակայված ՀՀ ազգային անվտանգության ծառայության Սահմանապահ ուղեկալում, ծանոթացել սպաների ընտանիքների համար ստեղծված բնակելի պայմաններին:

Տեղ համայնքի Կոռնիձոր բնակավայրում վարչապետը ներկա է գտնվել պուրակի և խաղահրապարակի բացման արարողությանը: Ծրագրի իրականացման նպատակով կառավարությունը հատկացրել է 39.9 մլն դրամ: Այստեղ վարչապետ Փաշինյանը հարգանքի տուրք է մատուցել նաև հանուն հայրենիքի կյանքը նվիրաբերած հերոսների հիշատակին:

Վարչապետն Իշխանասար բնակավայրում այցելել է «ԱՆԴ» ընկերության ինտենսիվ այգի, օղու և քացախի արտադրության գործարան: Ընկերությունը ՀՀ կառավարության վարկերի սուբսիդավորման և լիզինգի աջակցության ծրագրերով ձեռք է բերել 204 մլն դրամի գյուղտեխնիկա և ագրոպարենային ոլորտի սարքավորումներ: Արդյունքում ստեղծվել է 7 հա ընդհանուր մակերեսով խնձորի ինտենսիվ այգի, իսկ սարքավորումները նպաստում են որակյալ արտադրությանը:

Սիսիանում Նիկոլ Փաշինյանը եղել է նաև Անտառային կոմիտեի տնկարանում, որտեղ ներկայացվել են առկա տնկիներն ու անտառների վերականգնման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

Հաջորդիվ՝ Շաքիի ջրվեժի հարակից տարածքում վարչապետը հանդիպում է ունեցել Սիսիանի ավագ դպրոցի աշակերտների հետ, որոնք «Արմաթն օդում» (Armath Airborne) անօդաչու թռչող սարքերի (ԱԹՍ) կրթական ծրագրի շրջանակում անցկացված «Հաւք» ԱԹՍ մրցույթում վերջին երկու տարիներին զբաղեցրել են մրցանակային տեղեր: Վարչապետը ծանոթացել է ԱԹՍ-ների ստեղծման ուղղությամբ աշակերտների ձեռքբերումներին, զրուցել նրանց հետ տարբեր թեմաների շուրջ և պատասխանել կրթության, երիտասարդների խնդիրներին վերաբերող հարցերի:

«Արմաթն օդում» ծրագիրն «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների ծրագրի զարգացման ուղղություն է, որն իրականացնում է Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունը: Աշխատանոցներում պատանիները ստանում են անօդաչու թռչող սարքերի աշխատանքի տեսական գիտելիքներ, յուրացնում են դրանց նախագծման ու պատրաստման, ծրագրային ապահովման, տեխնիկական սպասարկման և կառավարման առանձնահատկությունները:

18.06.2024

Միջազգային լրագրողների խումբը Տաթևում. այցելություն «Տաթևեր» ճոպանուղի և Տաթևի վանական համալիր

Աշխարհի ամենաերկար հետադարձելի ճոպանուղին՝ «Տաթևերը», և միջնադարյան Հայաստանի հոգևոր, մշակութային ու լուսավորչական կարևոր կենտրոններից մեկը համարվող Տաթևի վանական համալիրն այս օրերին հայտնվեցին միջազգային լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում:

Հայաստանի զբոսաշրջային ներուժն ու տարեցտարի զարգացող գաստրոտուրիզմը բացահայտելու նպատակով մի խումբ լրագրողներ՝ միջազգային հեղինակավոր պարբերականներից, այցելեցին Հայաստան՝ ծանոթանալու հայկական աշխարհի տեսարժան վայրերին, պատմամշակութային և հոգևոր կենտրոններին:

Հունիսի 7-ին միջազգային լրագրողական խումբը Տաթևում էր: Ճոպանուղուց օգտվելիս հյուրերը հնարավորություն ունեցան վայելելու Որոտանի կիրճի համայնապատկերը, Սատանի կամրջի և Տաթևի անապատի վրայով անցնող տպավորիչ թռիչքը, որի վերջին հանգրվանը 9-րդ դարում կառուցված Տաթևի վանական համալիրն է: Ճոպանուղու ամենաբարձր կետում (320 մ) հյուրերին սպասվում էր գաստրոնոմիկ փորձառություն՝ կազմակերպված «Չեչիլ» ՍՊԸ-ի կողմից, որը ներկայացնում է հայկական ավանդույթները, արհեստը, ժառանգությունն ու նրբագեղությունը ժամանակակից աշխարհում:

Թռիչքից հետո լրագրողական խումբը շրջայց կատարեց Տաթևի վանական համալիրում, ծանոթացավ վանքի դարավոր պատմությանը, Սյունիքի զարգացման գործում ունեցած դերին, ինչպես նաև տարածաշրջանին առնչվող հետաքրքիր փաստերին, թվերին ու իրադարձություններին, այցելեց վանական խցեր և միջնադարյան ձիթհանի թանգարանը:

Իսկ ճոպանուղու հալիձոր կայանի մոտ վերաբացված «Տաթևատուն միրհավի» կողմից ռեստորանում հյուրերը բացահայտեցին հայկական խոհանոցի գաղտնիքները, ավանդական ուտեստների համն ու հոտը:

«Սա առաջին անգամ չէ, երբ «Տաթևեր» ճոպանուղին և Տաթևի վանական համալիրը հայտնվում են միջազգային լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում: Տաթևը Հայաստանի ամենահայտնի զբոսաշրջային ուղղություններից է: Այսօր ճոպանուղի է այցելում երկրի յուրաքանչյուր հինգերորդ հյուրը: Դրա շնորհիվ զբոսաշրջային հոսքը դեպի Սյունիքի մարզ 2010 թ. համեմատ աճել է 17 անգամ: Հուսով ենք՝ միջազգային լրատվամիջոցների այցելություններն ու անդրադարձները կխթանեն այս միտումը և աշխարհի տարբեր անկյուններից ավելի ու ավելի շատ մարդիկ կկարողանան բացահայտել այս եզակի ուղղությունը», – ասում է ճոպանուղին կառավարող «Impulse Business Management» ընկերության տնօրեն Մարիա Բուտենկոն:

«Տաթևերը» լինելով աշխարհի ամենաերկար (5752 մ) հետադարձելի ճոպանուղին և 13 տարվա ընթացքում սպասարկելով ավելի քան 1 միլիոն այցելուի՝ երկու անգամ ճանաչվել է աշխարհում լավագույնը՝ ըստ World Travel Awards միջազգային հեղինակավոր մրցանակաբաշխության: Առաջին անգամ «Տաթևերը» հաղթել է 2021-ին, երկրորդ անգամ՝ 2023-ին՝ գերազանցելով Բոլիվիայի, Բրազիլիայի, Վիետնամի, Կանադայի, Նոր Զելանդիայի, ԱՄՆ-ի և ՀԱՀ-ի համանման կազմակերպություններին:

«Տաթևեր» նախագիծն իրականացվում է Ռուբեն Վարդանյանի և Վերոնիկա Զոնաբենդի կողմից մեկնարկած «Տաթևի վերածնունդ» ծրագրի շրջանակում: Ճոպանուղին շահույթ չհետապնդող նախագիծ է, որից ստացված ողջ հասույթն ուղղվում է Տաթևի վանական համալիրի վերականգնմանը և տեղի համայնքի զարգացմանը: «Տաթևեր»-ը կառավարում է «Impulse Business Management» ընկերությունը:

* * *

Տաթև կատարած այցի ընթացքում Մարիա Բուտենկոյի հետ զրուցեց Մարիամ Լազարյանը:

– Տիկին Բուտենկո, երբ խոսում ենք «Տաթևեր» ճոպանուղու մասին, չենք կարող չհիշել Ռուբեն Վարդանյանին, ով ճոպանուղու կառուցման ակունքներում է: Մեզ հետաքրքրում է ադրբեջանական գերության մեջ գտնվող Ռուբեն Վարդանյանի վիճակը, կա՞ հույս, որ մոտ ապագայում նա կազատվի ադրբեջանական գերությունից:

– Հայաստանում, բացի «Տաթևեր» ճոպանուղուց, նաև այլ նախագծեր կան, որոնց նախաձեռնողը Ռուբեն Վարդանյանն է եղել, ու մեզ համար հիմա շատ կարևոր է գերությունից նրա ազատումը: Մենք բոլորս գիտենք, որ նա ապօրինաբար է գերեվարված, և դա ընդունված քաղաքական ենթատեքստ ունի: Միևնույն ժամանակ գիտենք, որ Ռուբեն Վարդանյանի՝ Արցախում գտնվելն ունեցել է մարդկանց օգնելու նպատակ: Մենք հիմա էլ սպասում ենք նրան, ինչպես բոլորը: Ինչ-որ առանձին նորություններ չգիտենք Ռուբեն Վարդանյանի ազատման հետ կապված, բայց, ինչպես բոլորը, մենք էլ մեծ հույսով սպասում ենք ամենամոտ ժամանակում Ռուբեն Վարդանյանի վերադարձին:

– Ինչպե՞ս եք գնահատում «Տաթևեր» ճոպանուղու վիճակը 2020-ի և դրան հաջորդած պատերազմներից ու համաճարակից հետո: Առերևույթ նկատելի է, որ Սյունիք այցելող զբոսաշրջիկների թիվը պակասել է:

– Քովիդից և պատերազմից հետո իրականում զբոսաշրջիկների հոսքի անկում է եղել, ու դա հիմնականում կապված է այդ երկու պատճառի հետ: Մինչ այդ մեզ համար կարևոր էր 2019 թ. կարևոր ցուցանիշը, որովհետև ամենաշատ թվով զբոսաշրջիկներին ընդունել ենք հենց այդ տարում: 2023 թվականին ևս բավականին մեծ թվով զբոսաշրջիկներ ու այցելուներ ունեցանք: 2019 թ. ունեցել ենք մոտ 150 հազար զբոսաշրջիկ: Դրանից հետո երեք անգամ նվազել է զբոսաշրջիկների հոսքը, իսկ արդեն 2023 թվականին աճ է նկատվել: Պատերազմական գործողությունները տարածաշրջանի վրա շատ են ազդել: Մարդիկ մտածում են՝ Սյունիքն այն վայրն է, որի սահմանագծում հաճախ տեղի են ունենում բախումներ, այդ պատճառով հոսքը բավականին քիչ է: Այստեղ իսկապես մենք ակնկալում ենք տուրիզմի կոմիտեի աջակցությունը, իրենք էլ իրենց հերթին ամեն բան պետք է նախաձեռնեն՝ ցուց տալու համար, որ Սյունիքը անվտանգ է, Սյունիքը գեղեցիկ է և իսկապես արժե գալ ու այդ գեղեցկությունը վայելել:

– Ի՞նչ ծրագրեր է իրականացնում ճոպանուղին Տաթևի ենթաշրջանի գյուղերում: Որքան հիշում եմ՝ նման ծրագրեր ունեիք ի սկզբանե:

– «Տաթևեր» ճոպանուղին ավելի մեծ՝ «Տաթևի վերածնունդ» նախագծի մաս է կազմում, որը ստեղծվել է 2008 թվականին, ու նախագծի շրջանակում մի քանի կարևոր բաղադրիչ ենք ունեցել: Առաջինը Տաթևի վանքի վերակառուցումն է, երկրորդը՝ համայնքի և զբոսաշրջության զարգացումը: Ինչ վերաբերում է համայնքին՝ նախագծի մեկնարկման ժամանակվանից մինչև հիմա շուրջ հիսուն միլիոն դոլարի ներդրում է իրականացվել, որի շնորհիվ մոտավորապես տասներկու կիլոմետր ճանապարհ է նորոգվել: Ունեցել ենք դպրոցների և մանկապարտեզների նորոգում, Տաթևի վանքի հատվածում վերականգնվել է ձիթհանի թանգարանը: Իհարկե, «Տաթևի վերածնունդ» նախագիծը ոչ առևտրային կազմակերպություն է, և ճոպանուղուց ստացված ամբողջ հասույթն էլ ուղղվում է իմ նշած նպատակներին, այսինքն՝ Տաթևի վանական համալիրի վերականգնմանը և համայնքային զարգացմանը: Իհարկե, դեռ չենք վերջացրել վանքին առնչվող մեր ծրագրերը, որովհետև բավականին մեծ ներդրումներ է պահանջում, ու դրա համար ճոպանուղու հասույթն ամբողջությամբ ուղղվում է նման ծրագրերի իրականացմանը:

– Ռուբեն Վարդանյանը Տաթևի վանքի հետ կապված մտադրություններ ուներ, կարո՞ղ ենք ենթադրել, որ նրա բացակայությամբ այդ ծրագրերը սառեցված են, թե՞ իրականացվում են:

– Եթե կարճ՝ ոչ, քանի որ մեր հիմնական նպատակն է՝ Ռուբեն Վարդանյանի բացակայության ընթացքում շատ ավելին անել, ինչը հնարավոր է: Իրականում մարդկային գործոն կա, երբ ստրեսային իրավիճակներում մարդիկ ուղղակի որոշում են ոչինչ չանել և դադար են տալիս, բայց մեր հիմնական նպատակն այն է, որ Ռուբենի բացակայության ընթացքում մեր ամբողջ ներուժը, ամբողջ ջանքերն ուղղենք նրան, նրա նախաձեռնած ծրագրերը կարողանանք շատ ավելի լավ ձևով իրականացնել և կարողանանք տանել այնպիսի ակտիվությամբ, ինչպես եղել է իր՝ այստեղ գտնվելու ժամանակ: Եվ քանի որ այս պահին չգիտենք հստակ, թե երբ դուրս կգա նա գերությունից, ձգտում ենք այդ նախագծերն առավելագույնս իրականացնել և լավագույն արդյունքներ ունենալ:

– Միշտ չէ, որ այսպիսի ներկայացուցչական խմբով այցելում եք ճոպանուղի: Ո՞րն է այսօրվա՝ նման բազմամարդ և ներկայացուցչական այցելության նպատակը:

– Մեզ համար կարևոր է ներկայացնել Սյունիքը և մասնավորապես ճոպանուղին: Դա նաև նախագծի կարևոր բաղադրիչներից է: Այսօր այստեղ ենք հրավիրել միջազգային լրատվամիջոցների ներկայացուցիչների՝ ներկայացնելու «Տաթևի ներածնունդ» ծրագիրը, որպեսզի կարողանանք շատ մարդկանց իրազեկել ճոպանուղու, նաև Սյունիքի մասին, քանի որ ճոպանուղին գտնվում է Սյունիքի մարզում, որը հիմնական զբոսաշրջային վայրերից է, ինչն ապահովում է շատ մեծ թվով զբոսաշրջիկների հոսք: Ու փորձում ենք միջազգային մամուլի ներկայացուցիչներին բերելով այստեղ, առավելագույնս տեղեկացնել Սյունիքի մարզի և նրա տեսարժան վայրերի ու բոլոր այն հնարավորությունների մասին, որ յուրաքանչյուր տուրիստ կարող է ստանալ: Միևնույն ժամանակ՝ բացման օրվանից սկսած մոտավորապես քսանից ավելի փառատոն է այստեղ անցկացվել, տարբեր կազմակերպությունների հետ ենք համագործակցել: Այդ ամեն ինչի նպատակը դեպի Սյունիք, դեպի ճոպանուղի, դեպի Տաթև զբոսաշրջիկների հոսքը մեծացնելն է: Մեզ համար շատ կարևոր է, որ մարդիկ գան այստեղ, ունենան տպավորություններ և կարողանան դրանից հետո իրենց ընկերներին, բարեկամներին պատմել ու նրանց նույնպես բերել Սյունիք՝ ցույց տալու այս հրաշք բնությունը, ծանոթացնելու երկրամասի պատմությանը:

– Վերջում կցանկանայինք իմանալ նաև ճոպանուղուց օգտվելու գնային քաղաքականության մասին: Արդյո՞ք գործող գները վերանայելու կամ փոփոխելու կարիք չկա:

– Ճոպանուղուց օգտվելու գները փոխվել են 2024 թվականին, իսկ դրանից առաջ՝ 2019 թվականին: Այսինքն հինգ տարի անց մի փոքր ավելացել է, բայց դա այն պատճառով, որ ճոպանուղու տեխնիկական ծախսերը նույնպես մեծացել են: Եվ որպեսզի կարողանանք բարձրակարգ սպասարկում ապահովել, անհրաժեշտ էր մի փոքր փոփոխել գները: Մեր հիմնական նպատակն է՝ մեզ մոտ այցելող յուրաքանչյուր հյուր պետք է ստանա լավ և որակյալ ծառայություն ճոպանուղու կողմից: Այդ առումով ունենք գործընկերներ՝ ի դեմս «Թաբիլ»-ի և «Տաթևատուն միրհավ»-ի, որոնք մեզ հետ միասին հյուրերին տրամադրում են հանգստի լավ հնարավորություն: Եվս մեկ անգամ նշեմ՝ ճոպանուղու ամբողջ հասույթն ուղղվում է Տաթևի վանական համալիրի և համայնքի զարգացմանը: Դա նույնպես կարևոր հանգամանք է՝ գնային քաղաքականություն որոշարկելիս: //

Ահեղընթաց մրցակցություն «Զանգեզուրի միջանցք» հորինվածքի շուրջ. իսկ ի՞նչ են մտածում Սյունիքում՝ երկրամասի համար ճակատագրական այդ հարցի շուրջ

Չկա մի օր, որ աշխարհի որևէ ուժային կենտրոնից (ամենատարբեր մակարդակներով) նկատառումներ, ուղերձներ, ծրագրեր չհնչեցնեն մեր հայրենական տան՝ Սյունիքի մասին, որը հաճախ ներկայացվում-մատնանշվում է նաև Զանգեզուր անվամբ:

Չկա մի օր, որ չլսենք հոխորտանք-սպառնալիք՝ Ադրբեջանը պատրաստվում է պատերազմի, Ադրբեջանը պատերազմ կսկսի Սյունիքի ուղղությամբ:

Չկա մի շաբաթ, որ Ադրբեջանը նոր պահանջներ չներկայացնի Հայաստանին՝ նաև Սյունիքին առնչվող: Մի օր Մեղրիով արտատարածքային միջանցք են ուզում, հաջորդ օրը «բնիկ» ադրբեջանցիների՝ «Արևմտյան Զանգեզուր» վերադարձի մասին են բարբաջում, երրորդ օրը հայոց Սյունիքը պատմական Ադրբեջան են համարում, չորրորդ օրն էլ լսում ենք, որ Սյունիքի բռնազավթված տարածքների եզրագծով Ադրբեջանը մոգոնված սահմանագիծն է փշալարով ամրակայում...

Մի խոսքով՝ Արցախյան երրորդ կամ 44-օրյա պատերազմից և հայոց Արցախն ուրանալուց ու Ադրբեջանին նվիրելուց հետո հայ-ադրբեջանական և նույնիսկ հայ-թուրքական հարաբերություններում ամենաքննարկվող թեման Սյունիքն է: Եվ խոսում են բոլորը, առերևույթ լուռ են միայն սյունեցիները...

* * *

Սյունիքին առնչվող քննարկումներում առանցքային հարցերից մեկն այսպես կոչված «Զանգեզուրի միջանցք» հորինվածքի շուրջ է:

Հարցը, որ հարյուր և ավելի տարիների ընթացքում թուրք-ադրբեջանական երազանք է եղել, նորովի բարձրացվեց 2020-ի մեր կապիտուլյացիայից հետո: Այդ տարվա նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության մեջ տեղ գտավ ինչ-որ 9-րդ կետ, որն էլ առայսօր իբր հիմք է ենթադրյալ միջանցքի շուրջ քննարկումների համար:

Իսկ ի՞նչ պայմանավորվածության են եկել կողմերը հայտարարության 9-րդ կետով: Ահա՝ **«Ապաշրջափակվում են տարածաշրջանում բոլոր տնտեսական և տրանսպորտային կապերը: Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է Ադրբեջանի Հանրապետության արևմտյան շրջանների և Նախիջևանի Ինքնավար Հանրապետության միջև տրանսպորտային հաղորդակցության անվտանգությունը՝ քաղաքացիների, տրանսպորտային միջոցների և բեռների՝ երկու ուղղություններով անխոչընդոտ տեղաշարժը կազմակերպելու նպատակով: Տրանսպորտային հաղորդակցության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են Ռուսաստանի ԱԴԾ սահմանապահ ծառայության մարմինները:**

Կողմերի միջև համաձայնեցմամբ՝ ապահովվելու է Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունն Ադրբեջանի արևմտյան շրջանների հետ կապող նոր տրանսպորտային հաղորդակցությունների շինարարությունը»:

Ինչպես տեսնում ենք՝ խոսքը տարածաշրջանային հաղորդակցության ուղիների ապաշրջափակման և ոչ թե Ադրբեջանին արտատարածքային միջանցք տրամադրելու մասին է, ինչպես պնդում են թուրքերը:

Ինչպե՞ս են թուրք-ադրբեջանական այդ նկրտումին արձագանքում Հայաստանն ու տարածաշրջանում շահեր կամ ազդեցություն ունեցող երկրները:

Նախ՝ Հայաստանի դիրքորոշումը. մեր իշխանությունները բազմիցս հայտարարել են, որ պատրաստ են ապաշրջափակել բոլոր երթուղիները և Ադրբեջանի արևմտյան շրջանները Նախիջևանի հետ հաղորդակցվելու ուղիներ տրամադրել՝ առանց ՀՀ ինքնիշխանությունը և տարածքային ամբողջականությունը խախտելու: Ընդ որում՝ Ադրբեջանը հրաժարվում է օգտվել այդ առաջարկությունից:



Թուրքիան և Ադրբեջանը, խեղաթյուրելով 2020-ի նոյեմբերի 9-ի հայտարարության 9-րդ կետը, հարցը հանգեցնում են (Հայաստանի ինքնիշխան տարածքով) Ադրբեջանին արտատարածքային միջանցք տրամադրելուն: Ընդ որում՝ ենթադրյալ միջանցքում հայկական կողմը ոչ մի ներկայություն չպիտի ունենա:

ԱՄՆ-ի և Արևմուտքի դիրքորոշումն այս հարցում հստակ է: Ըստ նրանց՝ Եվրոպան և Ասիան կապող տնտեսական-առևտրական խոշոր տրանսպորտային երթուղու ստեղծման անհրաժեշտություն կա, ինչը համահունչ է համաշխարհային տնտեսության պահանջներին: Նրանք բացառում են նման երթուղու առկայությունն Իրանի տարածքով:

ԱՄՆ-ի և Արևմուտքի դիրքորոշումը, ինչպես տեսնում ենք, համահունչ է Ադրբեջանի և Թուրքիայի ձգտումներին: Այդ հանգամանքը թույլ է տալիս, որ Ադրբեջանն ավելի հետևողականորեն պնդի «Զանգեզուրի միջանցքի» բացման ու շահագործման իր պայմանները:

«Զանգեզուրի միջանցքի» հարցում թուրք-ադրբեջանական հավակնությունը զսպելու գործում բացառիկ մեծ դեր ունի Իրանի Իսլամական Հանրապետությունը: Այդ երկրի ղեկավարությունն ամենաբարձր մակարդակով քանիցս հայտարարել է, որ Հայաստանի տարածքային ամբողջականությունն իր համար կարմիր գիծ է, և ոչ մի դեպքում չի հանդուրժի, եթե հայ-իրանական հազարամյա սահմանը խախտվի կամ վտանգվի: Իրանի դիրքորոշման վերաբերյալ մտահոգություն է հայտնել Թուրքիայի նախագահը՝ ասելով, թե միջանցքի հարցում հիմնական խոչընդոտը ոչ թե Հայաստանն է, այլ Իրանը:

Նախագահ Իբրահիմ Ռայիսիի և արտգործնախարար Հոսեյն Ամիր Աբդոլլահիանի ողբերգական մահվանից հետո Իրանը կրկին հաստատեց, որ երկրի արտաքին քաղաքական կուրսը փոփոխության չի ենթարկվի, այդ թվում՝ Հայաստանի ուղղությամբ:

Նման տեսակետ նախևառաջ հայտնել է Իրանի Գերագույն հոգևոր առաջնորդը:

Վերջին օրերին մեզանում առանձնակի հետաքրքրությամբ ընդունվեց Իրանի արտգործնախարարի պաշտոնակատար Ալի Բաղերի Քանիի հայտարարությունը CNN-ի թուրքական ծառայությանը: Անդրադառնալով «Զանգեզուրի միջանցքի» թեմային՝ նա նշել է՝ **«Մենք ողջունում ենք ցանկացած նախաձեռնություն, որը կարող է տարածաշրջանի զարգացման հիմքեր ստեղծել, սակայն որևէ պարագայում տարածաշրջանում սահմանների ու ժողովրդագրության փոփոխություն չենք ընդունում»:**

Այսպիսով՝ ԻԻՀ-ն վերահաստատում է՝ թույլ չի տա գործարկել մի միջանցք, որը կխախտի Հայաստանի ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը: Ասել է թե՝ հաղորդակցության ապաշրջափակվող ուղիները պետք է լինեն բացառապես Հայաստանի Հանրապետության վերահսկողության ներքո:

Ավելին՝ ԱԳ նախարարի պաշտոնակատարի խոսքում առաջին անգամ անթույլատրելի է համարվում նաև ժողովրդագրական փոփոխությունը տարածաշրջանում: Դա, կարծում ենք, պատասխան է Ադրբեջանի երազանքներին՝ «Արևմտյան Զանգեզուր» վերադարձնելու այնտեղից (1989-91 թվականներին) տեղափոխված ադրբեջանցիներին:

Հիմա՝ Ռուսաստանի Դաշնության դիրքորոշման մասին: Ռուսաստանի ներկայացուցիչները քանիցս հայտարարել են, որ «Զանգեզուրի միջանցք» արտահայտությունն իրենք չեն էլ ընդունում: Ըստ նրանց՝ կա պայմանավորվածություն հաղորդակցության ուղիների վերաբացման մասին, որը, բնականաբար, կլինի տվյալ երկրի ինքնիշխանության ներքո: Միևնույն ժամանակ, Ռուսաստանի Դաշնությունը հղում է կատարում 2020 թ. նոյեմբերի 9-ի հայտարարության 9-րդ կետին և հիշեցնում տվյալ փաստաթղթում տեղ գտած հետևյալ պայմանավորվածությունը՝ **«Տրանսպորտային հաղորդակցության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում են Ռուսաստանի ԱԴԾ սահմանապահ ծառայության մարմինները»:**

Հնչում է նաև կարծիք՝ այսպես կոչված փոխզիջումային տարբերակի մասին, ասել է թե՝ ենթադրյալ միջանցքում հիմնական գործառույթները (մաքսային ծառայություն, անձնագրային ստուգում, անվտանգության ապահովում) մենք կարող ենք պատվիրակել եվրոպական մեկ կամ մի քանի երկրի կամ ԱՄՆ-ին: Ընդ որում՝ վկայակոչվում են, թե աշխարհում նման փորձ կա:

Մենք մասնագետ չենք և, բնականաբար, չենք կարող դրա արդունավետության մասին տեսակետ հայտնել: Բայց կուզենայինք այդ գաղափարի կողմնակիցների փաստարկված կարծիքը լսել:

Մի հանգամանք է ակնհայտ՝ ենթադրյալ միջանցքի մաքսային, անձնագրային, անվտանգային ծառայությունները եվրոպական երկրներին կամ ԱՄՆ-ին պատվիրակելու դեպքում կբախվենք առնվազն երկու իրողության: Նախ՝ Իրանի և Ռուսաստանի ազդեցությունը տարածաշրջանում էականորեն կնվազի կամ կզրոյանա, իսկ Ադրբեջանի ու Թուրքիայի ազդեցությունը կդառնա լրջագույն գործոն տարածաշրջանում: Ակնհայտ է, որ հավաքական Արևմուտքը (բացառությամբ՝ Ֆրանսիայի) չի կարող խոչընդոտ հանդիսանալ Ադրբեջանին ու Թուրքիային՝ հնարավոր և նրանց բնորոշ սանձարձակությունների դեպքում:

Երկրորդ, այդ տարբերակով (ինչպիսի գեղեցիկ փաթեթավորմամբ էլ ներկայացվի) Սյունիքում էական նահանջ կունենա Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունը:

* * *

Վերևում ներկայացրինք կողմերի պաշտոնական դիրքորոշումները կամ շրջանառվող տարբերակները խնդրո առարկայի վերաբերյալ: Սակայն կան նաև հարցեր, որոնք քննարկվում են այդ ամենից դուրս՝ ոլորտի մասնագետների ու փորձագետների կողմից:

Հայ հանրության զգալի հատվածը, այդ թվում՝ սյունեցիների մեծ մասը, «Զանգեզուրի միջանցքի» հարցում ԱՄՆ և Արևմուտքի դիրքորոշման հիմնական նպատակ են տեսնում Սյունիքում Ռուսաստանի դիրքերի վերջնական թուլացումը և տարածաշրջանից այդ երկրի ուժերի դուրս բերումը:

Հավաքական Արևմուտքի դիրքորոշման նպատակներից մեկն էլ Իրանի առջև մեր տարածաշրջանի դռները փակելն է:

«Զանգեզուրի միջանցքի» բացումը թուրք-ադրբեջանական կամ ԱՄՆ-Արևմուտք պատկերացումներով, Սյունիքում նույնպես ընկալվում է իբրև պանթյուրքիզմի կամ թուրանիզմի գաղափարախոսությունը կյանքի կոչելուն միտված քայլ: Ավելի ստույգ՝ ենթադրյալ «Զանգեզուրի միջանցքով» Թուրքիան կարող է ցամաքային կապ ստեղծել էթնիկ, մշակութային և լեզվական ընդհանրություն ունեցող ժողովուրդների հետ՝ դրանից բխող հետևանքներով:

Սյունիքում քաջատեղյակ են, որ դեռևս 19-րդ դարավերջից Թուրքիան ձգտում է կյանքի կոչել Սյունիքով՝ Արևելքի հետ ցամաքային կապ ստեղծելու ծրագիրը:

Այդ գաղափարը կենսունակ է եղել նաև խորհրդային տարիներին, բայց Հայաստանի խորհրդային հանրապետության բոլոր ղեկավարները (առանց բացառության) խափանել են դրա իրականացումը:

Սյունիքում ոմանք փորձում են նսեմացնել Իրանի դիրքորոշման կարևորությունը՝ պնդելով, թե Իրանի քաղաքականությունը պայմանավորված է նախևառաջ իր սեփական շահերով, քանզի Սյունիքը եզակի լոգիստիկ հնարավորություն է հյուսիսի հետ կապ ունենալու համար: Դրանում, անկեղծ լինենք, որևէ վատ բան չենք տեսնում: Իսկապես, մի՞թե լավ չէ, որ մեր և Իրանի շահերը համընկնում են Սյունիքի տարածաշրջանում:

Մեզանում օրավուր աճող հակառուսական քարոզի պայմաններում տեսակետ է առաջ քաշվում, թե իբր 2020-ի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության 9-րդ կետի իրականացման դեպքում (ենթադրյալ միջանցքում ՌԴ վերահսկողության հաստատման պարագայում) ՌԴ-ն այդ երթուղին կծառայեցնի Թուրքիայի և Ադրբեջանի շահերին:

Իհարկե, ՌԴ-ի վերջին տարիների Կովկասյան քաղաքականությունից զգուշանալու, նույնիսկ վիրավորված ու նեղացած լինելու բազմաթիվ պատճառներ ունենք: Սակայն, որպես պատմաբան, քանիցս փորձել եմ գտնել շատ կարևոր մի հարցի պատասխան՝ **մի՞թե Սյունիքով (արտատարածքային) միջանցքի գործարկումը և դրանով պանթյուրքիզմի առաջ կանաչ լույս վառելը ձեռնտու կլինի Ռուսաստանի Դաշնությանը:** Եվ այդպես էլ չեմ գտել հիմնավորումներ, որ խնդրի լուծման նման տարբերակը շահեկան կլինի Ռուսաստանի համար: Ավելին՝ մենք շնորհակալ կլինենք այն փորձագետին, ով կհիմնավորի, թե ինչու պետք է Ռուսաստանին ձեռնտու լինի թուրք-ադրբեջանական պատկերացումներով «Զանգեզուրի միջանցքի» բացումը:

Մեկ ուրիշ հարց ևս. **երբ խոսք է գնում 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության 9-րդ կետի մասին, շատերն անվերապահորեն հայտարարում են,** թե այդ փաստաթուղթը չի գործում և վաղուց ուժի մեջ չէ: Առաջին հայացքից շատ ճիշտ դիրքորոշում է, քանզի այդ հայտարարության գրեթե ոչ մի կետ կյանքի չի կոչվել կամ կյանքի են կոչվել միայն Ադրբեջանին օգտակար դրույթները: Ու դեռևս 2020 թ. դեկտեմբերի 18-ի խայտառակությունից հետո, երբ Սյունիքի արևելյան մարտական դիրքերը նվիրեցինք Ադրբեջանին, մեր պարբերականը հայտարարեց՝ **նոյեմբերի 9-ի հայտարարությունը ոչ պետքական թուղթ է այլևս, քանզի փաստաթղթի ամենակարևոր՝ 1-ին կետը խախտվել է:** Բայց եթե իսկապես այդ փաստաթուղթն ուժը կորցրել է և չի գործում, ապա ինչո՞ւ մեր ստորագրությունը հետ չենք կանչում: Ու քանի դեռ մեր ստորագրությունը հետ չենք կանչել՝ 2020 թ. նոյեմբերի 9-ի հայտարարությունը (այդ թվում՝ 9-րդ կետը), ցավոք, մնում է ուժի մեջ:

* * *

Մեր խոսքի սկզբում ասացինք՝ Սյունիքն առերևույթ լուռ է իր գոյությանն առնչվող՝ ճակատագրական այդ հարցի շուրջ մրցակցությունում:

Բայց կա իրական Սյունիք, որտեղ առկա է լրջագույն մտահոգություն «Զանգեզուրի միջանցքի» հարցում: Եվ այդ մտահոգությունը հանգում է պարզագույն մի եզրակացության՝ Սյունիքի տարածքով՝ ոչ մի պարագայում և ոչ մի պայմանով, չի կարող գործարկվել որևէ միջանցք՝ Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունից դուրս: Հակառակ դեպքում վտանգի տակ կդրվի ոչ միայն մեր պետության ապագան, այլև հազարամյակների պատմություն ունեցող հայոց Սյունիքի լինելիությունը:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ



Բնության և մարդու ներդաշնակությունը Լորիկ Մինասյանի արվեստում

Անկեղծանում է՝ իր կյանքի ծանր, ողբերգական մի պահի, ծնկի եկած իր արվեստանոցում, դիմել է Երկնքին, խնդրել արձագանքելու իր փնտրումին: Եվ այդ ժամանակ իր ճակատին լույս է բացվել, լույս, որ, իր զգացողությամբ, Սուրբ հոգին էր, որ սեր էր, կյանքի աղբյուր:

Գեղանկարիչ Լորիկ Մինասյանի՝ օրերս բացված անհատական ցուցահանդեսը խորագրված է «Մարդու և բնության ներդաշնակությունը»: Տեղեկացված լինելով Լորիկի արվեստից՝ այս խորագիրը կվերաձևակերպեի՝ «Աստծո որոնումը մարդու և բնության ներդաշնությամբ»: Իհարկե, ցուցադրված շուրջ քառասունհինգ կտավները հայոց բնության հանդեպ սիրո արտահայտություն են՝ արվեստային բարձրորակ կատարումներով, գունային հանդարտ թախծությունից մինչև վառ երանգների խտությամբ, ընդգծուն նուրբ - քնարական տրամադրությամբ եղանակներով, այունյաց սոսիների պուրակի խորհրդավորությամբ, հայկական լեռնաշխարհի խստությունը մեղմող՝ խաղաղորեն տարածված բնակավայրերի վրձնումով, ժայռերից, ասես, խոյացող, բնությանը նույնքան ներդաշն մեր հինավուրց ձեռակերտ տաճարների պատկերներով: Հայաստանի բնության թանգարանում ցուցադրված կտավները նաև ճանաչողական նշանակություն ունեն այցելուների համար, քանի որ Լ. Մինասյանի արվեստը հնարավորություն է մտովի շրջելու Հայաստանի տարբեր վայրերում, ճանաչելու մեր երկիրը՝ իր հազարումի գույնով, հազարումի լեռ ու ծերպով, լեռների փեշերին, լեռների պաշտպանությանն ապավինած գյուղակներով, կենդանի աղոթքներ դարձած վանքերով... Քառասունհինգ գործը բավարար չէ Լորիկի արվեստի մասին ամբողջական պատկերացում կազմելու համար, բայց և ակնարկ է, թե ինչ կերպ է ստեղծագործում, ինչ ձեռագիր ունի, ինչից է խոսում և խորհում, ինչպիսին են նրա երազները, և ինչ նոր միտումներ են ուրվագծվում իր նկարչությունում: «Հաղպատ» և «Տաթև», «Հալիձոր» և «Վահանավանք», «Դադիվանք» և «Այրիվանք»,– այս և մնացյալ վանքանկարները մեր միջնադարյան ճարտարապետական կոթողների զուտ գեղանկարչական արձանագրումներ չեն, այլ բնապաշտության ու հայրենանվիրության արտահայտություններ, որոնց հիմքում նկարչի ներքին ապրումն ու Աստծո որոնումն է:

Լորիկը նաև քանդակագործ է: Ենթադրում եմ՝ իր ձգտումը դեպի քանդակագործություն բխում է իր ծագումից: Ծագումով Այունյաց աշխարհից է՝ շիկահողցի. նրա նախնիները բրուտագործներ են եղել, և հավանաբար, արյան հիշողությունն է նաև մղել իրեն դեպի արվեստը: Լորիկի առաջին նշանակալից գործերից է 1990-ին իր ավագ եղբոր՝ գեղանկարիչ և քանդակագործ Բորիկ Մինասյանի համահեղինակությամբ ստեղծված «Մուսա» հարթաքանդակը, որ պահպանվում է Կապանի պատկերասրահում: Քաջարանում է կանգնեցված քաղաքի 50-ամյակի առթիվ Լորիկ Մինասյանի և Գևորգ Մշեցու համահեղինակությամբ ստեղծված քանդակը: Քաջարանի «Կենաց ծառ»-ի հեղինակը դարձյալ Լորիկն է: Ցեղասպանության ճանաչման գործում ներդրում ունեցած հայորդիների հիշատակը հավերժացնող կոթողի մրցույթի հաղթողն է, Արցախյան առաջին պատերազմի զոհվածների հիշատակին ձոնված հուշակոթող - խաչքարի համահեղինակ և այլն: Բայց ամենից առավել կարևորում է այն փաստը, որ հեղինակել է Կապան քաղաքի զինանշանը: Խորին հարգանքով և երախտագիտությամբ է տալիս իր ուսուցիչների՝ Լևոն Կոջոյանի և Ղուկաս Չուբարյանի անունները, որոնց ուսանել և որոնցից արվեստի և մարդկայնության դասեր է քաղել: Հայկական մանկավարժական համալսարանի կերպարվեստի ֆակուլտետում ուսանելու շրջանը Լորիկի համար ինքնահաստատման և ինքնադրսևորման տարիներ էին: Հետագայում դասավանդեց Կապանի արվեստի դպրոցում, որպես մեթոդիստ՝ աշխատեց Կապանի Ժամանակակից արվեստի թանգարանում, որպես դիզայներ՝ ՀՀ Գիտությունների ակադեմիայի Կապանի մասնաճյուղի փորձարարական գործարանում: Միաժամանակ նկարում էր, մասնակցում ցուցահանդեսների, անհատական ցուցահանդեսներով հանդես գալիս Սիսիան, Գորիս և Կապան քաղաքներում (2014, 2015, 2019 թվականներին), Մոսկվայում (2017 թ.), 2012 թ. Գարեգին Նժդեհի 125-ամյակի կապակցությամբ կազմակերպված ցուցահանդեսում լավագույնն է ճանաչվում նրա «Խուստուփի գարունը» կտավը:

Լ. Մինասյանի վրձնած լեռնագագաթների մեջ առանձնանում է «Խուստուփ»-ը: Նրանում հորիզոնին մերձ լեռն այնքան վեհություն ու հզորություն է իրենից արձակում, այնքան վստահ հանդարտությամբ է փռված նրա փեշերի տակ գյուղակը, և այնքան լայնակուրծ ես շնչում այն դիտելիս: Կողքին Դադիվանքը պատկերող կտավն է, «ծերը»՝ կանաչի մեջ խրված, մեր հավերժ անկորույսը, մերը: Մի քանի շաբաթ առաջ էր, որ Գորիսում նկարչական սիմպոզիումի մասնակիցների հետ վրձնեց ևս մի ժայռանկար: Ու՞մ ծանոթ չէ Գորիսից դեպի Խնձորեսկ ճանապարհին դարերից հողմավար - ցցուն ժայռախումբը, և սիմպոզիումի մասնակից յուրաքանչյուր նկարիչ իր ձեռագրակերպով և գունաբաշխումներով է պատկերել այն: Բայց Լորիկը մի անսպասելի կերպար է ներմուծել իր բնանկարում: Վառ գունախաղով ժայռերի ֆոնին և ներքո՝ մարդկային բնակավայրից վեր՝ թևող երկնավորն է՝ հրեշտակը: Բնանկարներից բացի Լորիկը հոգևոր թեմաներով շատ կտավներ ունի. դա ուղղակի սրբանկարչություն չէ, այլ հեղինակային գեղանկարչական մտածումներ են, խոկումներ: Որտեղի՞ց է բխում աստվածայինի որոնման իր ջանքը: Անկեղծանում է՝ իր կյանքի ծանր, ողբերգական մի պահի, ծնկի եկած իր արվեստանոցում, դիմել է Երկնքին, խնդրել արձագանքելու իր փնտրումին: Եվ այդ ժամանակ իր ճակատին լույս է բացվել, լույս, որ, իր զգացողությամբ, Սուրբ հոգին էր, որ սեր էր, կյանքի աղբյուր: *«Այդ պահից էր, որ սկսեցի ճանաչել Աստծուն, ճանաչել մարդուն...»,*– ասում է նկարիչը:

Հոգևոր թեմաներով նկարչության շարքին եմ դասում Լորիկ Մինասյանի «Կուսանաց վանք»-ը. Էջմիածնի Սուրբ Հռիփսիմե վանքն է՝ թեթև մշուշոտ օրվա թախծության մեջ... Այդ կտավի տպավորությամբ եմ գրում բանաստեղծական տողս.

Մոխրակապտաթույր միգամածության
թավիշ-դյութանքով
Ասես շուրջանակ ճառագայթում է վանքը
Կուսանաց,
Մինչ մայրամուտի պայծառ -
լուսարար պատարագումով
Հաշտության խոսքով Անտեսն է ասես՝
իբրև հուշարար:
Միտքս մինչ այս պահ սերտած աղոթքի
բառը մոռացած՝
Նոր սաղմոսների կնդրուկաբուրվառ
հունչն է որոնում՝
Մերձավոր դաշտի գունափոխ խոտի
ալեհերությամբ,
Չոր ավշե ճյուղքով ծառի մերկացյալ
անօգությունով...

ՀԱՍՄԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ
12.06.2024

Բաց նամակ Ներսես Խառատյանին՝
ընտրանի ժողովածուի ծննդյան առիթով



Բարև, թանկագին բարեկամ. Քո արձակ ու չափածո ժողովածուների շարքում այս ընտրանին առանձնահատուկ առաքելություն ունի. ընթերցողներին ծննդյան 70-ամյակի առիթով ներկայացնել ստեղծագործական ճանապարհի այն կիզակետերը, որոնք քո գրականության ուղենիշներն են, թեև պիտի խոստովանեմ, որ գիրքն, այնումենայնիվ, ամբողջությամբ չի արտահայտում Ներսես Խառատյան արձակագրի թողած նշանակալի հետագիծը ժամանակակից հայ արձակում: «Թռիչք ժամանակից դուրս» գիրքդ, ցավոք, ինձ «հասավ» նրա լույս աշխարհ գալուց... յոթ տարի անց, և այդ առիթով գնահատանքի խոսք ասել նշանակում է ինչ-որ առումով անդրադարձ կատարել ընդհանրապես քո արձակ ստեղծագործություններին, մանավանդ, որ այդ ժողովածուն ներառում է ոչ միայն անցած, այլև վերջին տարիներին գրված պատումներ: Եվ սա առիթ է քավելու իմ «մեղքը», որ ինչ-ինչ անհիմն պատճառներով առ այսօր գնահատանքի խոսք չեմ ասել քո ստեղծագործական բեղմնավոր ճանապարհի մասին, թեև ժամանակին սիրով եմ ընթերցել «Կարոտի երգեր», «Դու հրաշք էիր, կյանք» բանաստեղծական ժողովածուները, ՀԳՄ Դերենիկ Դեմիրճյանի անվան մրցանակին արժանացած դետեկտիվ ժանրի «Ո՞վ սպանեց Էլենին» վեպը: Այս ժանրում նույնպես քո ներդրումը մեծ է, և ընթերցողների շրջանում այդ ժանրի երկերը լայն արձագանք են գտել: Վերջերս էլ այդ փաստը հաստատագրվեց, և դու կրկին արժանացար ՀԳՄ Դերենիկ Դեմիրճյանի անվան մրցանակին՝ «Գործուղում Վիեննա» դետեկտիվ վեպի համար: Եվ այլ պարգևեր ու մրցանակներ՝ տարբեր գրքերի ծննդյան առիթներով՝ «Հրանտ և Մանուշակ Սիմոնյաններ» հայամերիկյան գրական հիմնադրամի մրցանակ՝ «Մերժվածները» վեպի համար, ՀԳՄ «Գրական վաստակի համար» մեդալ, Միջազգային անվտանգության ակադեմիայի «Տիգրան Մեծ» շքանշան... Պատկերացնել է պետք. ութ ծավալուն վեպ ես պարգևել մեզ, որից յոթը՝ դետեկտիվ ժանրին բնորոշ հյուսվածքով: Այսօր արդեն շուրջ 20 գրքի հեղինակ ես՝ «Գիշերով եկար», «Խաղ մահվան հետ» պատմվածքների ժողովածուները, «Մերժվածները», «Հին օրերի կանչը», «Հովտաշուշան» (վեպեր), ռուսերեն «Сожги меня» («Մորմոք»)... Ո՞ր մեկը թվեմ...

Եվ այսպես, ուշացումով ընդունիր գնահատանքի իմ խոսքը, թեև տեղին է գրականագետ իմ գործընկերներին նույնպես «կշտամբել» (եթե իրավունք ունեմ այս խոսքով նրանց դիմել), որ բավական ժլատ են եղել քո գրականության արժևորման առումով: Բայց և այնպես, առանձին գնահատանքի խոսքեր մեջբերված են «Հին օրերի կանչը» վեպի հավելվածում՝ արտահայտված «Մերժվածները» վեպի՝ 2018-ի հոկտեմբերյան շնորհանդեսում:

Իսկ հիմա՝ ըստ էության: Քո ընտրանի այս ժողովածուի բնաբանն արդեն ինչ-որ չափով ուղղորդում է ընթերցողին, բայց, իմ կարծիքով, ամբողջովին չի արտահայտում գրքի բուն նպատակը: Այո՛, ժողովածուում «ընդգրկված պատմվածքներն ու նովելներն աչքի են ընկնում թեմատիկ բազմազանությամբ, արծարծվող խնդիրների ինքնատիպ, գունեղ ու հյութալի պատումային ընթացքով... Հեղինակն ինչի մասին էլ գրի, ասելիքի խորքում մարդկային ես-ի ու գոյի հոգեբանության տարաբնույթ դրսևորումներ են, ինչն էլ պատումը դարձնում է յուրօրինակ ու հետաքրքիր»: Իսկ ինձ թվում է, որ այս ճշմարիտ դիտարկումով հանդերձ, շեշտված չէ գրքի ամենաբնորոշ զարկերակը՝ քո խնկարկվող սերը հայրենի եզերքի՝ ծննդավայր Մեղրիի գեղակերտ բնաշխարհի և նրանում ու նրանով ապրող հայրենակիցներիդ հանդեպ, նրանց վարքուբարքը, կենցաղը, առօրյա հարաբերությունները՝ բեկված անցյալի դառնագին հուշերի և ներկայի հպարտ կեցության խաչմերուկներում, այդ կեցությանը շաղախված հումորը, խոսքն ու խոհը, երկխոսություններում մարդկային էությունը դրսևորելու քո ունակությունը: Ստեղծագործական ճանապարհի այդ երակը մանկության հուզիչ պատկերներով երևակվում է հատկապես «Հին օրերի կանչը» պատումաշար-վեպում, որի նախաբան «Երկու խոսք»-ում քո սիրո խոստովանությունն է առ ծննդավայր Մեղրի. «Մեղրին իմ նախնիների

↘

Հարժիսի հնավայրը կարող է բացառիկ լինել ամբողջ հանրապետության մասշտաբով

Վերջին շրջանում ակտիվացել է հնագետների հետաքրքրությունը Հարժիս գյուղի ներկայիս տարածքի հանդեպ:

Հնավայրի նկատմամբ հետաքրքրություն է ցուցաբերում նաև ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի վաղ հնագիտության բաժնի գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու Մարիամ Շախմուրադյանը:

Մայիսի 18-ին նրան հանդիպեցինք Հարժիսում՝ հերթական այցելության ժամանակ, և փորձեցինք պարզել հնավայրին առնչվող մի քանի հարցի պատասխան:

– Հարգելի Մարիամ, նախ կուզենայինք իմանալ Ձեր գիտական հետաքրքրության շրջանակի մասին:

– Իմ ատենախոսության թեման առնչվում է «անապատի օդապարուկներին»: Դրանք մեծ չափերի քարե հուշարձաններ են, գտնվում են Արագածոտնի ու Արմավիրի մարզերում:

Վերջերս, սակայն, երբ տեղեկացա Հարժիսի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների մասին, երբ ծանոթացա դրանց վերաբերյալ եղած կարծիքներին, Հարժիսի հնավայրն ինձ շատ հետաքրքրեց, ու ցանկություն առաջացավ զբաղվել դրա ուսումնասիրմամբ:

– Փորձեք, խնդրեմ, ընդհանուր գծերով բնութագրել Հարժիսի հնավայրը:

– Խոսքը, իհարկե, ներկայիս Հարժիսի տարածքի մասին է և ոչ թե Ներքին շենի:

Գյուղի տարածքում տարիների ընթացքում գտնվել են բազմաթիվ մարդկային գլուխներ և իրան ներկայացնող արձաններ, սյուներ, սյան խարիսխներ: Կան նաև կոթողներ՝ պատկերագրությամբ և առանց:

Ներկայիս գյուղատեղին կառուցված է հնավայրի վրա: Ամենայն հավանականությամբ տարածքում եղել է տաճար, գուցե և տաճարներ: Այդ մասին են վկայում սյուների խարիսխները, որոնք մի վայրում են կուտակված և դրանց շրջակայքում հայտնաբերված ամբողջական սյուները:

Հայտնաբերվել են նաև դամբարաններ և՛ գյուղի տարածքում, և՛ գյուղի գործող գերեզմանոցի տեղում ու մերձակայքում: Դրանց գոյությունը հաստատվել է նաև հնագետ Օնիկ Խնկիկյանի կողմից կատարված պեղումների շնորհիվ:

Մենք դեռևս չգիտենք՝ արդյո՞ք այդ արձանները, կոթողները, սյուները, դամբարանները ժամանակագրորեն փոխկապակցված են միմյանց հետ:

Ո՞ր ժամանակաշրջանին են պատկանում այդ հուշարձանները. դա նույնպես միարժեքորեն որոշված չէ:

Բոլոր այդ (և ոչ միայն այդ) հարցերի պատասխաններն իմանալու համար կա քայլերի հաջորդականություն, որով և առաջնորդվում ենք:

Առաջին քայլը. պետք է անպայման ճշտել, թե առկա կոթողները որտեղի՞ց, ե՞րբ և ի՞նչ հանգամանքներում են հայտնաբերվել: Մոտ մեկ ամիս առաջ մենք աշխատանքներ սկսեցինք հենց այդ ուղղությամբ:

– Նախկինում էլ, որքան տեղյակ ենք, ներկայիս Հարժիսի տարածքն արժանացել է հնագետների ուշադրությանը: Այդ մասին կուզենայինք իմանալ, եթե, իհարկե տեղյակ եք:

– 1980-ականներին գյուղի գերեզմանոցի մերձակայքում պեղումներ է կատարել հնագետ Օնիկ Խնկիկյանը. արդյունքները հրապարակվել են: Այնուհետև՝ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատողներն են ուսումնասիրություններ կատարել և՛ գյուղի տարածքում, և՛ շրջակայքում. Ուսումնասիրությունների արդյունքում Հարժիսի արձանների վերաբերյալ հոդված է հրապարակվել անգլերեն լեզվով: Հեղինակներն են Հայկ Ավետիսյանը, Գագիկ Սարգսյանը, Արտակ Գնունին և Արսեն Բոբոխյանը: Ի դեպ, նրանք ուսումնասիրել են նաև ընդհանուր Սյունիքի բրոնզ-երկաթեդարյան հնագիտական լանդշաֆտը, և այդ ընթացքում նույնպես հատուկ անդրադարձ է կատարվել Հարժիսին: Հարժիսի առավել ուշ ժամանակաշրջանի վիմագրերն ուսումնասիրել է Արսեն Հարությունյանը:

– Ձեր ներկայիս գործողություններն ինչ-որ կոնկրետ արշավախմբի շրջանակո՞ւմ են, թե՞ անձնական նախաձեռնության կամ անձնական հետաքրքրության դրսևորում են:

– Ընդամենը՝ անձնական նախաձեռնություն: Հիմա տեղեկություններ եմ հավաքում: Հետագայում գուցե և արշավախումբ ձևավորվի ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի կողմից:

– Եթե տվյալներ եք հավաքում Հարժիսի հնավայրի մասին՝ ուրեմն և որոշակի արդյունքներ կամ նախնական տեղեկություններ ունեք արդեն:

– Այս պահին ունենք մարդկային գլուխներ ներկայացնող յոթ արձաններ՝ այդ թվում՝ Գորիսի երկրագիտական թանգարանում գտնվողը: Պարզել ենք դրանց հայտնաբերման ժամանակաշրջանը: Պարզել ենք, որ բոլորը

հայտնաբերվել են տեղում՝ հողային աշխատանքների կատարման ժամանակ: Քարե սյուները նույնպես տեղում են հայտնաբերվել: Սյան խարիսխների մասին. դրանք տարբեր տեսակի են, ինչը նշանակում է՝ գործ ունենք պատմական տարբեր փուլերի հետ: Այսինքն՝ ոչ թե մեկ ժամանակաշրջանում ստեղծված հուշարձաններ են, այլ՝ տարբեր: Ասել է՝ նույն հնավայրն օգտագործվել է տարբեր ժամանակներում:

Առկա են նաև սալաքարեր թե՛ առանց պատկերագրության, թե՛ պատկերագրությամբ: Օրինակ, քարերից մեկի վրա երկու կողմից օձի պատկերներ են:

Գյուղի տների բակեր մտնելիս նույնպես տեսնում ենք քարերի բլոկներ կամ հին շինությունների սալաքարեր, որոնց նշանակությունը մարդիկ չեն գիտակցել և օգտագործել են մերօրյա շինություններում:

Կան նաև դրանց անմիջական հարևանությամբ հայտնաբերված կավե անոթներ:

Գտնվել են սալարկային (սալաքարերով շարված) դամբարաններ, որոնց մեջ՝ մարդկային ոսկորներ, անոթներ...

Ստացվում է՝ տվյալ տարածքում ունենք բավականին շատ հնագիտական նյութ:

Եվ, այդքանով հանդերձ, հնավայրին առնչվող բոլոր հարցերի պատասխանը չենք կարող տալ առանց պեղումների:

Ներկայումս Հարժիսի տարածքում հայտնաբերված հուշարձաններն ակադեմիական շրջանակներում թվագրվում են մ.թ.ա. 2-1-ին հազարամյակներով, ասել է թե՝ 4-3 հազար տարի առաջ: Այդկերպ մտածելու հիմքեր կան, մասնավորապես ոճական նույնություն կա ուրիշ հուշարձանների հետ, որոնց թվագրությունը որոշակիացված է:

Խնկիկյանի պեղումների արդյունքում հայտնաբերված առարկաները նույնպես այդ ժամանակաշրջանից վաղ չեն:

Այս պահին մի բան կարող ենք ստույգ ասել՝ Հարժիսում գործ ունենք բավականին մեծ և հարուստ նախաքրիստոնեական հնավայրի հետ:

– Դուք նշեցիք քարե սյուների մասին, որ գտնվել են հնավայրում: Մինչև հիմա այն տեսակետն է շրջանառվում, թե երկուսը վիշապաքար է, մեկը՝ տաճարի սյուն:

– Չէի ասի, որ դրանք վիշապաքար են: Վիշապաքարերը կոթողներ են, որոնք հստակ տեսք ունեն. հիմնականում ձկան կամ ցլի տեսքով են կամ երկուսն էլ միախառնված: Երբեմն էլ ուրիշ տեսք են ունենում: Այսինքն՝ վիշապաքարերը որոշակի կենդանական պատկերագրություն ունեն:

Հարժիսի՝ Ձեր նշած երկու կոթողի վրա չկա նման պատկերագրություն: Դրանց վրա ձուկ, ցուլ կամ այլ կենդանական պատկեր չենք տեսնում: Մեկի վրա մարդու դեմք է պատկերված: Մեր կարծիքով երեք սյուներից և ոչ մեկը վիշապաքար չէ: Ավելի ստույգ՝ մեկը քառակող կոթող է, մեկը մարդակերպ կոթող, իսկ մյուսը սյուն է:

– Դուք նշեցիք հնավայրում վերջերս գտնված՝ օձի պատկերով քարի մասին: Ձեր նախնական կարծիքն այդ հուշարձանի վերաբերյալ:

– Նման սալեր, որ երկու կողմում պատկերված են օձեր, բնորոշ են առնվազն մ.թ.ա. 10-րդ հազարամյակից սկսած ու երկար ժամանակահատվածում են հանդիպում: Թվագրության վերաբերյալ ավելի ստույգ տեղեկություն չենք կարող հայտնել՝ առանց պեղումների:

Չէի ցանկանա վերջնական կարծիք հայտնել տվյալ հուշարձանի նշանակության մասին: Ավելի հավանական է, որ այն ջրի պաշտամունքն արտահայտող հուշարձան է:

– Հետագա անելիքներին անդրադառնանք, թեև փոքր-ինչ ներկայացրիք կատարվելիք աշխատանքների հաջորդականությունը:

– Այս պահին իրականացնում ենք հուշարձանների քարտեզագրում: Դա նշանակում է՝ շրջել տարածքում և քարտեզագրել յուրաքանչյուր հուշարձան: Այնուհետև՝ հայտնաբերված հուշարձաններին առնչվող հանգամանքների պարզում՝ ե՞րբ, որտե՞ղ և ինչպե՞ս են դրանք ի հայտ եկել: Այնուհետև՝ դրանցից յուրաքանչյուրի բարձրակարգ լուսանկարում, չափագրություն և քարտեզի վրա տեղադրում: Միայն դրանից հետո կարելի է որոշել, թե գյուղի որ հատվածն է առավել հեռանկարային պեղումների իրականացման համար:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ

Բնօրրան է: Պղնձակոփ ժայռերի, մայր Արաքսի, փոքր թաղում վեր խոյացող Նաղաշ Հովնաթանի նկարազարդած Սուրբ Սարգիս եկեղեցու ու այլևայլ հրաշալիքների հարևանությամբ կյանքն այնտեղ այսօր էլ շարունակվում է, ու հայրենի եզերքի տարեգրության նոր էջերն են գրում նրանք, ովքեր Մեղրու այսօրվա պատասխանատուներն են: Այնտեղ ներկայի հետ նաև անցյալն է ապրում՝ ձուլված սերունդների հիշողությանը՝ իր էջերում ամփոփելով հետաքրքիր պատմություններ, հիշարժան դեպքեր ու անուններ...»: Այս ամենը, տարբեր ստեղծագործությունների էջերից ճառագող սերը բնօրրանի հանդեպ հենց քո գրականության բաբախող զարկերակներից է:

Ընթերցողի տարակուսանքը չեմ կիսի, եթե այս պարագայում հավելեմ, որ, Ներսես ջան, շատ պատումների միջավայրը, հերոսների կոլորիտային կերպարների ինչ-ինչ նրբագծեր համահունչ են քո մեծ հայրենակցի՝ Ակսել Բակունցի «Կյորես» վիպակի հյուսվածքին: Ես նկատի ունեմ հատկապես «Չքնաղ Մեղրի, քաղցր մանկություն» բաժնի մի շարք պատումներ, որոնցում առօրյա կյանքի «մանր», երբեմն զավեշտալի դիպվածներում դու երևակում ես մարդկային հոգեբանության, դժվար կենսընթացի աննկատելի թվացող «մեծ» ցավը, կարեկցանքի ստվերն ու լույսը, և դա անում ես այդ մարդկանց հանդեպ սիրո ու նվիրումի զգացումներով: Գրքի առաջին՝ անխորագիր բաժնի «Հանցագործը», «Խաղ մահվան հետ», «Օտարվածը», «Վայրագը» և այլ նովելային պատումների «երակները» նույնպես բաբախում են նույն զարկերակներով: «Քաղցր մանկության» դառնագին հուշը, այս կամ այն հերոսի վարքուբարքի, արարքների պատճառ-հետևանքները, երբեմն անհավատալի հանգամանքներում դրսևորվող «ես-ն ու գոյը» (բնաբանի բնորոշումով) քո գրական հավատամքի հենայուներն են՝ քեզ հուզող գաղափարն ու խնդիրը երևակելու համար: Եվ պատումների «ներսից» բարձրանում, մեզ պարուրում է խոհափիլիսոփայական մտորումը՝ հերոսների ճակատագրի, նրանց արարքների «արդարացման» քո ջանքերի վերջնական նպատակադրումը. այդ մարդիկ իրենց մեծ ու փոքր ցավ-հոգսերով, իրենց վարքուբարքով ծննդավայր Մեղրիի անցյալ ու ներկա կենսընթացի անբաժանելի մասն են: Ինչպիսի՜ լուսավոր, ջերմաշունչ, բայց հոգեխռով, ներհուն թախիծով, «քաղցր մանկության» դառը հուշերով ես դու շերտ-շերտ բացում-ներկայացնում մանկության ընկերներիդ, մեղրեցի հայրենակիցներիդ՝ նրանց ճակատագրի հանդեպ տագնապալի խոսք ու խոհով: Ահա «հարևան Բագրատ բիձան՝ կարճահասակ, ջլատ մի մարդ՝ կնճռապատ, պեպենոտ ու հարբեցողությունից մշտապես կարմիր, մեծ քթով»: Այս ընդհանրական բնութագիրը «Խալխի մալը» պատումի հյուսվածքում «արդարացվում» է արդեն պատումի բուն հյուսվածքում՝ մարդկային հոգեբանության նուրբ դիտարկումներով, երբ նույն այդ ծերունին բարոյական դասեր է տալիս իր ծխախոտից գողունի օգտվող դեռահասին՝ «խալխի մալին աչք գցողի վերջը լավ չի վերջանա» խրատական ասացվածքով: Հերոսի ընդհանրական նախաբնութագիրը ներքին հյուսվածքում բացել-ներկայացնելը կոնկրետ փաստերով՝ քո արձակին բնորոշ գծերից է: Ահա «մանկության քո հասակակից ընկերներից դժբախտ մեկը, որ մշտապես բոյկոտի աննախանձելի վիճակում էր: Երբ գործիքը ձեռքին երևում էր, ետևից կանչում էին՝ «դոռեմիֆասլոդո»: Եվ ապա հյուսվում է քո իսկ հուշապատումը «երաժշտական արկածներիդ» մասին՝ «արանքում» էլ որդու ճակատագրի հանդեպ ջերմ, բարի խոսքեր հայրական տագնապներով: «Ո՞ւր են ճողոպրում» պատումը նույնպես դպրոցական տարիների թանկ ու նվիրական հուշ է բարի ու նրբանկատ տնօրենի մասին: Իսկ «Գաբոն», «Բեյբութ», «Վարուժան Բաղդասարիչ», «Ղեյրաթի Վանեսը» և այլ պատումներում մեղրեցի հայրենակիցներիդ կյանքի ու կենցաղի ուշագրավ դրվագներում երևակվում է կերպարներ կերտելու (այո՛, հենց կերտելու) քո վարպետությունը, առօրյա «սովորական» արարքների, հարաբերությունների մեջ անսովորը, ամենակարևորը նկատելու-արտացոլելու հմտությունը:

Եվ շնորհակալ ենք քեզ, Ներսես ջան, որ քո արձակով դու մեր գրականության մայրուղում բացել ես մի «մոռացված» երակ, որ անցյալի ինչ-ինչ ժամանակներում մենք կոչել ենք «գյուղագրություն», որ գրական կյանք վերադարձավ Հրանտ Մաթևոսյան մեծ արձակագրի տաղանդի շնորհիվ: Չեմ ժխտի, մեր այլ արձակագիրներ նույնպես ժամանակակից գրականություն են «բերել» իրենց գյուղի ու նրա մարդկանց «ես-ն ու գոյը», բայց դու, իմ կարծիքով, առանձնանում ես նրանց շարքում, և սա քո գրական հավատամքի հանդեպ ոչ թե չափազանցված բարձր գնահատանքի արգասիք է, այլ՝ ճշմարիտ հայացք ինքնատիպ ձեռագիր ունեցող արձակագրի երևելի ներկայության արժևորում:

Այս ամենով հանդերձ՝ տարակուսանք ունեմ քո ընտրանիի խորագրի առիթով: Քո իսկ պատմվածքներում ու նովելներում «ապրող» մարդիկ գործում եմ հենց իրենց ժամանակի մեջ, իրենց ժամանակի տիրույթում: Հապա էլ ինչո՞ւ՝ «Թռիչք՝ ժամանակից դուրս»: Որքան էլ ջանք թափեցի, ների՛ր, չկարողացա վերծանել խորագրի քո իմաստավորումը: Ես ժողովածուում ոչ իրական թռիչք տեսա, ոչ էլ՝ ժամանակից դուրս ապրող ու գործող մարդկանց: Եթե սա անհարկի դիտարկում է իմ կողմից, հուսով եմ, առիթ կլինի լսել քո մեկնաբանությունը: Հեռախոսազրույցում պարզաբանեցիր, որ այդ խորագրով պատում է տեղ գտել քո ժողովածուներից մեկում, և այն «մեխանիկորեն» փոխանցվել է ընտրանիին: Պարզ է, բայց դա չի արդարացնում իրողությունը:

Իհարկե, Ներսես Խառատյան բանաստեղծ-արձակագրի ստեղծագործությունն ընդհանրապես առավել հանգամանալից և խորքային անդրադարձի անհրաժեշտություն ունի, բայց դա արդեն թերևս հերթական ժողովածուների լույս աշխարհ գալու առիթով: Այդ ակնկալիքով սպասում եմ ընթերցողների հետ քո նոր հանդիպումներին և ստորագրում՝

ԼՅՈՒԴՎԻԳ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ԲԱՆ. ԳԻՏ. ԴՈԿՏՈՐ
www.grakantert.am

Արցախի Հանրապետության Ազգային ժողովի 4 խմբակցության հայտարարությունը

Հունիսի 21-ին ՀՀ-ում Արցախի Հանրապետության մշտական ներկայացուցչության տարածքում տեղի ունեցած միջադեպը վեր հանեց այն փաստը, որ Հայաստանի գործող իշխանությունները հատել են ինչպես իրավական, այնպես էլ բարոյական արժեքների սահմանը:

Արցախի հանդեպ նմանօրինակ վերաբերմունքը շարունակությունն է օրեր առաջ՝ հունիսի 12-ին իրականացված բռնաճնշումների, ինչը վկայում է, որ հանուն իշխանության պահպանման նրանք պատրաստ են ոտնահարել երկրի Սահմանադրությունը և, անհամաչափ ուժ ու հատուկ միջոցներ կիրառելով սեփական ժողովրդի դեմ, կասկածի տակ դնել Հայաստանի Հանրապետության ժողովրդավարությունը և իրավական պետություն լինելու հանձնառությունը: Մեզ համար անընդունելի ու խստիվ դատապարտելի են այսպիսի երևույթները:

ՀՀ իշխանություններն արդեն տևական ժամանակ է, ինչ ժողովրդավարության քողի տակ թիրախավորում են արցախցիների տարբեր խմբերի ու անհատների, կիրառելով նրանց դեմ բռնաճնշումներ, խտրական վերաբերմունք՝ օգտագործելով «հայաստանցի-ղարաբաղցի» պառակտիչ բառապաշար:

Նման պայմաններում միաժամանակ տեղին ենք համարում երախտագիտության խոսք հղել հազարավոր ՀՀ մեր հայրենակիցներին, ովքեր արհամարհելով արհեստականորեն ստեղծված բաժանարար գծերը, անցած ինը ամիսների ընթացքում՝ մեզ համար դժվարին օրերին, ամեն ինչ արել են մեղմելու արցախահայության բարոյահոգեբանական և ֆիզիկական ցավը:

Վտանգավոր և անընդունելի է ներհանրային համերաշխությունը խարխլող և Արցախի հայության արժանապատվությունը վիրավորող բոլոր այն արարքները, հայտարարություններն ու ելույթները, որոնք դրսևորվում են ոչ միայն սոցիալական ցանցերում լայնորեն տարածված իրական կամ կեղծ օգտատերերի միջոցով, այլև ՀՀ Ազգային ժողովի ամբիոնից՝ իշխող քաղաքական ուժի ներկայացուցիչների կողմից հնչեցված:

Հայրենիքի և ազգային արժանապատվության համար պայքարը յուրաքանչյուր քաղաքացու, բոլոր ժողովուրդների անքակտելի իրավունքն է, ուստի պահանջում ենք ՀՀ իշխանություններից զերծ մնալ բռնություն, ատելություն և թշնամանք սերմանելու նենգ ու վտանգավոր դրսևորումներից:

Երևան, 24 հունիսի 2024թ.

«Արդարություն» խմբակցություն,
«ՀՅ Դաշնակցություն» խմբակցություն,
«Արցախի ժողովրդավարական կուսակցություն» խմբակցություն, «Ազատ հայրենիք-ՔՄԴ» խմբակցություն

Կապանի մարզադաշտը ճանաչվեց գերակա շահ. այն կհամապատասխանեցվի միջազգային չափանիշներին

Կապան քաղաքի մարզադաշտը և որոշ տարածքներ ճանաչվեցին հանրության գերակա շահ: Կառավարության հունիսի 6-ին նիստում նախագիծը ներկայացրեց Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը:

«Այս նախագծով առաջարկվում է Կապանի մարզադաշտում առկա գույքը, որի մի մասը սեփականություն է, իսկ՝ հողը՝ համայնքային, ճանաչել գերակա շահ, որպեսզի կարողանանք այն կառավարել և որոշակի աշխատանքներ իրականացնել, բարեկարգել: Առկա իրավիճակն այնպիսին է, որ մարզադաշտի ենթակառուցվածքները վերանորոգելու կամ հիմնովին կառուցելու կարիք կա: Բավականին լավ համալիր է, բայց սեփականության հետ կապված խնդիրները հնարավորություն չեն տալիս համալիրը զարգացնել այնպես, որ այն իր նպատակին ծառայի: Որոշման նպատակն այն է, որ Կապանում ունենանք ժամանակակից չափանիշներին համապատասխանող մարզական համալիր: Այսինքն՝ ոչ միայն ֆուտբոլի մարզադաշտ, այլ նաև մարզական այլ ենթակառուցվածքներ»,– ասաց Սանոսյանը:

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանն իր հերթին նշեց, որ Սյունիքում ֆուտբոլային երկու ակումբ կա, որոնցից «Գանձասար»-ը Հայաստանի բարձրագույն խմբում է հանդես գալու:

«Այնտեղ հնարավոր չէ անցկացնել բարձրագույն խմբի խաղերը, և թիմերը ստիպված են լինելու խաղալ Վայքում, երբ բարձրագույն խմբի խաղերը սկսվեն: Եվ այդ առումով շատ կարևոր է, որպեսզի Կապանի մարզադաշտը տեսքի բերվի ու համապատասխանեցվի պահանջներին: Ես այս մասին խոսակցություն եմ ունեցել նաև ֆուտբոլի ֆեդերացիայի մեր գործընկերների հետ: Ֆեդերացիայի կողմից կա որոշակի ներդրումների հնարավորություն՝ միջազգային խողովակներով»,– ասաց Անդրեասյանը: //



Նշվեց Վահանավանքի ուխտի օրը

Ամեն տարի սրբոց Հռիփսիմյանց և Գայանյանց տոներին հաջորդող շաբաթ օրը Հայ առաքելական եկեղեցին հիշատակում է Սուրբ Գրիգոր Լուսավորչի ելքը Խոր Վիրապից: 301թ. Սուրբ Գրիգոր Լուսավորչի՝ Խոր Վիրապից դուրս գալու հիշատակության օրն է, որը սկիզբ դարձավ հայոց մեծ դարձի: Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ հոգեշնորհ տեր Մակար վարդապետ Հակոբյանի օրհնությամբ «Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ելն ի վիրապէն» տոնի օրը հռչակվել է նաև Վահանավանքի ուխտի օր, որն արդեն մի քանի տարի է առանձնահատուկ ոգևորությամբ է նշվում Կապանում:

Հունիսի 8-ին՝ օրվա խորհրդին նվիրված Վահանավանքի վանական համալիրում մատուցվել է Սուրբ և Անմահ Պատարագ՝ Մեղրիի Սուրբ Աստվածածին եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Ռաֆայել քահանա Խաչիկյանի ձեռամբ, հոգեշնորհ Տեր Մակար Վարդապետ Հակոբյանի և թեմի հոգևոր հայրերի մասնակցությամբ: Պատարագից հետո վանական համալիրի տարածքում կազմակերպվել է մատաղի հյուրասիրություն, թեյախմություն, որից հետո միջոցառման մասնակիցներին համախմբել է հայկական շուրջպարը:

Ս. Պատարագին մասնակցում էին նաև Կապան համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանը և վանքի այս տարվա խաչքավոր Սմբատ Մարտիրոսյանը: //

ԿՈՐԵԼ Է «Քաջարանի արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի 2009թ. շրջանավարտ Դավիթ Ալիկի Առաքելյանի դիպլոմը՝ № 008799, գրանցման № 71: Համարել անվավեր:

ԿՈՐԵԼ Է Գենիկ Գուրգենի Հայրապետյանին պատկանող 1981թ. արտադրության МТЗ-52 մակնիշի տրակտորի պետհամարանիշը՝ 71-42ԱՓ: Համարել անվավեր:

ԿՈՐԵԼ Է Էդգար՝ Մխիթարի Պողոսյանի «Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ի 2016 թ. շրջանավարտ՝ նախնական մասնագիտական կրթական ծրագրով «Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում» մասնագիտությամբ (ներկարարի որակավորում), N 026932 դիպլոմը: Համարել անվավեր:

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:

Գլխավոր խմբագիր՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում:

«ԳՈՎԱԶԴ – ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է: ® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «ԳԻՆԴ-ՏՊԱՐԱՆ» ՍՊԸ-ում: Հասցեն՝ 0074, Երևան, Բագրատունյաց փող., 70ա շենք

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1010, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 25.06.2024թ.: